ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-Խ

ք. Երևան «18» փետրվարի 2026թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանուկյան, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մարինե Նորայրի Վարդանյանի, (Ծնված 02.12.1966թ., նույնականացման քարտի համարը 014968127, տրված 26.04.2023., 011-ի կողմից հանրային ծառայությունների համարանիշը 5212660198 (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE) և Ջրային կոմիտեի բյուջետային ծրագրերի շրջանակներում կամ միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում Սոցիալական մասնագետ/Բնապահպանական, սոցիալական, առողջության ու անվտանգության (ԲՍԱԱ) խմբի համակարգողի-ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 11,796,000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր ինսունվեց հազար) ՀՀ դրամ: Կատարողի մատուցման ենթակա ծառայության դիմաց վճարման ամսական հավասար համամասնությունը կազմում է 983,000 (ինը հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար

ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	Մարինե Վարդանյան
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 21-13
ՖՆ գործառնական վարչություն	նույնականացման քարտի համարը
Հ/Հ 900011040467	014968127, տրված 26.04.2023թ., 011-ի
ՀՎՀՀ 02555816	կողմից կողմից հանրային
գլխավոր քարտուղար	ծառայությունների համարանիշը
scws@scws.am	5212660198
	Բանկը՝ ԱԿԲԱ բանկ
	Հ/Հ 220304165818000
	Հեռ. 094-58-88-30
	Էլ. հասցե m_vardanyan@yahoo.com
_____ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ	---------- Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	

Հավելված N 1
«18» փետրվարի 2026թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-26/1-Խ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը*
85311210/16	խորհրդատվության ծառայություններ	*կարդալ ստորև	դրամ	11,796,000	1	Ծառայությունները մատուցվում են Ջրային կոմիտեում՝ Վարդանանց 13ա կամ Վարդանանց փակուղի 8 հասցեներում	Ծառայությունները մատուցվելու են «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE) շրջանակում, ոչ ուշ քան 30.12.2026թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE)»

Չափաբաժին 1

«Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի Սոցիալական մասնագետ/ԲՍԱԱ խմբի համակարգողի խորհրդատվության ծառայություններ

Ծառայության նկարագիրը

Ծրագրի իրականացման մարմին

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Ջրային կոմիտե (ՋԿ)

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) Համաշխարհային բանկի (ՀԲ), Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագիրը: Ծրագրի զարգացման նպատակն է (ԾԶՆ) ապահովել բարելավված հասանելիություն դեպի արդյունավետ, ֆինանսապես կայուն ոռոգման ու գյուղական բնակավայրերում անվտանգ կառավարվող ջրամատակարարման և ջրահեռացման (ՋևՋ) ծառայությունները Հայաստանի ընտրված տարածքներում: Ծրագիրը հանդիսանում է Բազմափուլային զարգացման մոտեցման (ԲԶՄ) մի մաս, որի նպատակն է բարելավել ոռոգման և գյուղական ՋՋ ծառայությունների մատուցումը Հայաստանում: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի ջրային ռեսուրսների անվտանգ կառավարման մակարդակը՝ հետևյալ հիմնական ուղղություններով. ա) ընտրված ոռոգման համակարգերի արդիականացում, բ) ընտրված գյուղական համայնքներում և մարզերում ջրամատակարարման բարելավում, և գ) ջրային ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ, ֆինանսական և բնապահպանական կայունության ամրապնդում:

ՋՈԾԲ ծրագրի առաջին փուլը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Ջրային ոլորտի բարեփոխումներ և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

Ենթաբաղադրիչ 1.1. Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության և պլանավորման ամրապնդում
Ենթաբաղադրիչ 1.2. Ոռոգման ոլորտի կառավարման և ծառայությունների մատուցման բարելավում
Բաղադրիչ 2. Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրպահեռացման բարելավում
Ենթաբաղադրիչ 2.1. Ինստիտուցիոնալ ամրապնդում, կարողությունների զարգացում և կարգավորող բարեփոխումներ
Ենթաբաղադրիչ 2.2. Տեխնիկատնտեսական հիմնավորումներ և ենթակառուցվածքների ներդրումներ
Բաղադրիչ 3. Ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացում
Ենթաբաղադրիչ 3.1. Կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայուն ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում և համակարգի կառավարում
Ենթաբաղադրիչ 3.2. Վերահսկիչ կառավարման և տվյալների հավաքագրման (SCADA) համակարգի ներդրում
Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

ՏԿԵՆ ՋԿ Ծրագրի իրականացման թիմը (ԾԻԹ) պատասխանատու է Ծրագրի ամենօրյա կառավարման համար և ապահովում է ազգային օրենսդրության և ՀԲ-ի Բնապահպանական և սոցիալական շրջանակի (ԲՍՇ) պահանջների համապատասխանությունը, որոնք մանրամասնորեն սահմանված են Ծրագրի Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում (ԲՍՀՊ):
ՋԿ-ն փնտրում է **Սոցիալական մասնագետ/ԲՍԱԱ խմբի համակարգող**, որը պատասխանատու կլինի նախագծի սոցիալական ռիսկերի և ազդեցության կառավարման համար՝ ապահովելով, որ Ծրագիրը համապատասխանի ՀԲ-ի Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին/չափորոշիչներին (ԲՍՍ), հատուկ ուշադրություն դարձնելով Ծրագրի իրականացման սոցիալական ասպեկտներին, ներառյալ ԲՍՍ1-ը (Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում), ԲՍՍ2-ը (Աշխատանք և աշխատանքային պայմաններ), ԲՍՍ4-ը (Համայնքի առողջություն և անվտանգություն), ԲՍՍ5-ը (Հողերի ձեռքբերում, հողօգտագործման սահմանափակումներ և հարկադիր տարաբնակեցում) և ԲՍՍ10-ը (Շահակիրների ներգրավում և տեղեկատվության հանրայնացում), ինչպես նաև պատասխանատու կլինի Ծրագրի ԲՍԱԱ խմբի աշխատակիցների համակարգման համար՝ համակարգելով բնապահպանության, գենդերային ու համայնքների իրազեկման (ԳՀԻ) և աշխատանքի անվտանգության ու առողջության (ԱԱԱ) մասնագետների աշխատանքը և ապահովելով ԲՍԱԱ պահանջների ինտեգրումը Ծրագրի գործունեության շրջանակում:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիալական մասնագետը/ԲՍԱԱ խմբի համակարգողը պատասխանատու է սոցիալական ռիսկերի և ազդեցությունների արդյունավետ կառավարումն ապահովելու, ինչպես նաև Ծրագրի իրականացման ընթացքում ԲՍԱԱ խմբի աշխատանքները համակարգելու համար ՀԲ ԲՍՇ ինչպես նաև կիրառելի ազգային օրենսդրության համապատասխան: Պատասխանատվության հիմնական ոլորտները ներկայացված են ստորև՝

Որպես սոցիալական մասնագետ պատասխանատու է ստորև առաջադրանքների համար.
Բնապահպանական և սոցիալական ռիսկերի ու ազդեցությունների գնահատում և կառավարում (ԲՍՍ1)

- Աջակցել Ծրագրի բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակի (ԲՍԿՇ) վերջնականացմանը, հանրայնացմանը և իրականացմանը՝ սերտորեն համագործակցելով Ծրագրի բնապահպանության մասնագետի հետ:
- Նպաստել տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ), բնապահպանական և սոցիալական կառավարման պլանների (ԲՍԿՊ) կամ Բնապահպանական և սոցիալական գործելակերպի կոդեքսների (ԲՍԳԿ) պատրաստմանը և իրականացմանը՝ սոցիալական ռիսկերի գնահատման և կառավարման մասով:
- Ապահովել սոցիալական պահանջների (օրինակ՝ աշխատանքի կառավարման ընթացակարգեր, վարքագծի կանոնագրքեր, բողոքարկման մեխանիզմներ) ինտեգրումը գնումների փաստաթղթերում և պայմանագրերում:
- Համակարգել աշխատանքները բնապահպանության մասնագետի հետ՝ ապահովելու, որ կապալառուները և վերահսկող ընկերությունները ներկայացնեն բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) կատարողականի ամսական հաշվետվություններ՝ համապատասխան իրենց մրցութային փաստաթղթերում և պայմանագրերում նշված չափանիշներին և պահանջներին. վերանայել և համախմբել այդ հաշվետվությունները, հետևել ուղղիչ գործողություններին և փոխանցել դրանք ՀԲ-ին:
- Նպաստել ռազմավարական էկոլոգիական և սոցիալական գնահատման (ՌԷՍԳ) տեխնիկական առաջադրանքների պայմանների (ԱՊ) մշակմանը՝ ապահովելով, որ սոցիալական չափումները համարժեքորեն արտացոլվեն կարգավորիչ բարեփոխումների և ոռոգման ազգային ռազմավարության մշակման հետ կապված: Նպաստել քաղաքականության բարեփոխումների հետ կապված սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բացահայտմանը և կառավարմանը, ինչպես նաև ջրամատակարարման, ոռոգման և գյուղական ջրամատակարարման ու ջրահեռացման ազգային ռազմավարությունների մշակմանը:
- Կատարել տեղամասային այցելություններ և խորհրդակցություններ՝ ԲՍՀՊ-ում սահմանված սոցիալական

պարտավորությունների կատարումը ստուգելու համար:

Աշխատանք և աշխատանքային պայմաններ (ԲՍՍ2)

- Աջակցել Ծրագրի Աշխատանքի կառավարման ընթացակարգերի (ԱԿԸ) վերջնականացմանը, հանրայնացմանը և իրականացմանը:
- Ապահովել աշխատողների բողոքների մեխանիզմի ստեղծումը և գործունեությունը:
- Վերահսկել կապալառուների և ենթակապալառուների կողմից աշխատանքի կառավարման պահանջների պահպանումը և աջակցել Ծրագրի Աշխատանքի անվտանգության և առողջության (ԱԱԱ) մասնագետին միջոցառումների վերահսկման գործում:

Համայնքի առողջություն, անվտանգություն (ԲՍՍ4)

- Վերահսկել համայնքի առողջության և անվտանգության (ՀԱԱ) միջոցառումների ինտեգրումը նախագծի գործունեության մեջ, ներառյալ երթևեկության կառավարումը, արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը և աշխատողների վարքագիծը:
- Բացահայտել և հասցեագրել խոցելի խմբերի հետ կապված հնարավոր ռիսկերը, ներառյալ գենդերային բռնության (ԳԲ), սեռական շահագործման և բռնության/սեռական ոտնձգության (ՍՇԲ/ՍՈ) հետ կապված ռիսկերը:
- Աջակցել ԳՀԻ մասնագետին ՍՇԲ/ՍՈ դեմ ուղղված գործողությունների ծրագրերի պատրաստման և իրականացման գործում՝ ապահովելով իրազեկվածության բարձրացում, վարքագծի կանոններ և զոհերին/տուժածներին աջակցող բողոքների մշակման և ուղղորդման մեխանիզմներ:

Հողի օտարում, հողօգտագործման սահմանափակումներ և հարկադիր տարաբնակեցում (ԲՍՍ5)

- Աջակցել Ծրագրի Տարաբնակեցման Շրջանակի (ՏՇ) վերջնականացմանը և իրականացմանը, ինչպես նաև տեղանքին բնորոշ Տարաբնակեցման Պլանների (ՎՊ) պատրաստմանն ու իրականացմանն՝ ապահովելով փոխհատուցում և կենսապահովման վերականգնում՝ համաձայն ԲՍՍ5-ի և Ծրագրի ՏՇ-ի:

Շահակիրների ներգրավում և տեղեկատվության հանրայնացում (ԲՍՍ10)

- Աջակցել ԾԻԹ-ին՝ հանրապետական և մարզային/համայնքային մակարդակներում համապատասխան պետական մարմինների, ինչպես նաև ՀԿ-ների, Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ), մասնավոր հատվածի, ակադեմիական հաստատությունների և թիրախային տարածքների համայնքների ներկայացուցիչների հետ համագործակցությունը խթանելու համար՝ Ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների արդյունավետ կառավարմանն աջակցելու նպատակով:
- Աջակցել Ծրագրի ԳՀԻ մասնագետին՝ ԾԻԹ-ի, կապալառուների, տեղական իշխանությունների և ազդակիր համայնքների միջև երկխոսությունը խթանելու համար:
- Ծրագրի ԳՀԻ մասնագետի աջակցությամբ անցկացնել համայնքի ներգրավման հանդիպումներ և իրազեկման ծրագրեր Ծրագրի համապատասխան բնապահպանական և սոցիալական ասպեկտների վերաբերյալ՝ Ծրագրի առավել անվտանգ իրականացումը խթանելու և ազդակիր համայնքներին իրենց իրավունքների և առկա աջակցության համակարգերի վերաբերյալ իրազեկելու համար:

Արձագանքման և բողոքների լուծման մեխանիզմ (ԱԲԼՄ)

- Աջակցել ԳՀԻ մասնագետին ստեղծելու արդյունավետ Արձագանքի և բողոքների լուծման մեխանիզմ (ԱԲԼՄ) Ծրագրի ազդակիր կողմերի և համայնքների համար, ինչպես սահմանված է Ծրագրի ՇՆՊ-ում:
- Նպաստել բողոքների լուծմանն ու զեկուցմանն՝ ապահովելով դեպքերի ժամանակին արձանագրումը և լուծումը:

Մշտադիտարկում, հաշվետվողականություն և ներուժի զարգացում

- Նպաստել ԾԻԹ-ի անձնակազմի, կապալառուների, վերահսկող ինժեներների, ՋՕԸ-ների և համայնքների համար սոցիալական չափորոշիչների, այդ թվում՝ աշխատանքի կառավարման, համայնքների առողջության և անվտանգության, Ծրագրի ԱԲԼՄ-ի, ՍՇԲ/ՍՈ հարցերի և շահակիրների ներգրավման վերաբերյալ կարողությունների զարգացման միջոցառումների նախագծմանը և իրականացմանը:
- Աջակցել սոցիալական միջադեպերի (օրինակ՝ բողոքի ցույցեր, հարկադիր վտարումներ, ՍՇԲ/ՍՈ դեպքեր) մասին հաշվետվությունների կազմմանը և հետաքննությանը, ինչպես նաև ապահովել ուղղիչ գործողությունների ծրագրերի պատրաստումն ու իրականացումը՝ համաձայն ԲՍՀՊ-ի և ՀԲ բնապահպանական և սոցիալական միջադեպերի արձագանքման գործիքակազմի (ԲՍՄԱԳ):
- Պատրաստել եռամսյակային մշտադիտարկման հաշվետվություններ և կիսամյակային առաջընթացի հաշվետվություններ, որոնք կներառեն սոցիալական ռիսկերի կառավարումը, շահակիրների ներգրավումը՝ ԲՍՍ-ներին համապատասխան:

Որպես ԲՍԱԱ խմբի համակարգող պատասխանատու է ստորև առաջադրանքների համար.

Խմբի համակարգում և ինտեգրում

- Համակարգել ԲՍԱԱ խմբի (բնապահպանության, (աշխատանքի, անվտանգության և առողջության) ԱԱԱ և (գենդերային և համայնքների իրազեկման) ԳՀԻ մասնագետների) համատեղ աշխատանքները՝ ԲՍԱԱ գործողությունների ժամանակին և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:
- Ապահովել, որ միջոլորտային հարցերը (օրինակ՝ խոցելի խմբերին առնչվող հարցեր, աշխատանքային առողջություն, կուտակային ազդեցություններ) արդյունավետորեն ներառվեն ԲՍԱԱ գործողությունների և հաշվետվության մեջ:

Մշտադիտարկում, հաշվետվողականություն և համապատասխանեցում

- Ապահովել, որպեսզի ԲՍԱԱ ընդհանուր մշտադիտարկման համակարգը գործի և պարբերաբար թարմացվի:
- ԲՍԱԱ բոլոր մասնագետներից ստացված տվյալները համախմբել վերադասին և/ կամ Բանկին ներկայացվող եռամսյակային/ կիսամյակային ԲՍԱԱ կատարողականի հաշվետվություններում:
- Հետևել և ապահովել ԲՍԱԱ-ին վերաբերող պարտավորությունների, մեղմացման միջոցառումների և կառավարման պլանների ժամանակին կատարումը:

Փաստաթղթերի և պլանների վերանայում

- Վերանայել և ապահովել կապալառուների կամ խորհրդատուների կողմից ներկայացված ԲՍԱԱ փաստաթղթերի որակը (օրինակ՝ Կ-ԲՍԿՊ-ներ, ԱԱԱ պլաններ, ԲԼՍ մշտադիտարկման հաշվետվություններ):
- Ապահովել ԲՍԱԱ դրույթների ինտեգրումը մրցութային փաստաթղթերում, պայմանագրերում և վերահսկողության ընթացակարգերում:

Կապ և ներկայացուցչություն

- Հանդես գալ որպես ԲՍԱԱ հիմնական կոնտակտային անձ[1]՝ Ծրագրի ղեկավարության, կապալառուների, ՏԻՄ-երի և գործընկերների հետ:

Բացի վերը նշված պարտավորությունները ԲՍԱԱ խմբի համակարգողը պարտավոր է Ջրային կոմիտեի նախագահի և/կամ նրա հանձնարարությամբ կամ հրամանով համապատասխան ոլորտ(ներ)ը համակարգող Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ(ների) հանձնարարությամբ տրամադրել անհրաժեշտ ծառայություններ Ջրային կոմիտեի կողմից իրականացվող՝ տարեկան բյուջետային ծրագրերի շրջանակներում կամ միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համար: Նշված ծառայությունները կտրամադրվեն ջրային համակարգերի և/կամ հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախագծման և կառուցման (վերակառուցման, հիմնանորոգման, վերականգնման, վերազինման, վերանորոգման) փուլերում գտնվող ծրագրերի իրականացման ընթացքում, ինչպես նաև նոր մշակվող ծրագրերի պլանավորման և իրականացման փուլերում:

2. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Համալսարանական կրթություն սոցիոլոգիայի, մարդաբանության, սոցիալական զարգացման, իրավունքի, պետական կառավարման, բանասիրության կամ հարակից ոլորտներում (գիտական կոչումը նախընտրելի է):
- Առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ սոցիալական ռիսկերի կառավարման, վերաբնակեցման կամ համայնքային զարգացման ոլորտներում, նախընտրելի է՝ ենթակառուցվածքային նախագծերում:
- Առնվազն 2 տարվա խմբի ղեկավարման, համակարգման կամ կառավարման փորձ միջազգային զարգացման կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող նախագծերում:
- Փորձառություն ՀԲ կամ այլ միջազգային զարգացման գործընկերների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում:
- ՀԲ ԲՍՇ-ի վերաբերյալ խորը գիտելիքներ, մասնավորապես՝ ԲՍՍ1, ԲՍՍ2, ԲՍՍ4, ԲՍՍ5 և ԲՍՍ10-ի դրույթների իմացություն:
- Հողերի ձեռքբերման, հարկադիր վերաբնակեցման և կենսապահովման վերականգնման ոլորտում փորձագիտությունը նախընտրելի է:
- Բողոքների մեխանիզմների նախագծման և կիրառման, ինչպես նաև շահակիրների ներգրավման գործընթացների իրականացման փորձ:
- Նախագծերում գենդերային հարցերի ինտեգրման, ՍՇԲ/ՍՈ ռիսկերի կանխարգելման և կառավարման փորձ (կդիտարկվի որպես առավելություն):
- Խորհրդատուների և կապալառուների ԲՍԱԱ ոլորտին առնչվող գործունեության վերահսկման փորձ:
- Ուժեղ միջանձնային, համակարգման և բանակցային հմտություններ՝ տարբեր շահակիրների՝ պետական մարմինների, կապալառուների և ազդակիր համայնքների հետ արդյունավետ աշխատելու ունակությամբ:
- Ջրային/ենթակառուցվածքային նախագծերում ԲՍԱԱ ռիսկերի մեղմացման իմացություն (կդիտարկվի որպես առավելություն):
- Համակարգման և առաջնորդության հմտություններ և բազմամասնագիտական թիմերում աշխատելու փորձ:
- Բարձր էթիկական չափանիշներ, ինտեգրման և մշակութային զգայունություն:
- Ուժեղ կազմակերպչական հմտություններ և ժամանակի կառավարման հմտություններ՝ բազմաթիվ առաջնահերթություններ կարգավորելու ունակությամբ:

[1] Բնապահպանության մասնագետը կներկայացնի բնապահպանական հարցերը առանձին Համաշխարհային բանկի հետ հանդիպումներին

- Հայերեն և անգլերեն լեզուներով գերազանց գրավոր և բանավոր հաղորդակցման և հաշվետվություններ գրելու հմտություններ:
- SS ստանդարտ ծրագրերի (MS Word, Excel, PowerPoint) իմացություն:

3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՋՈԾԲ Ծրագրի Սոցիալական մասնագետի/ԲՍԱԱ խմբի համակարգողի ծառայությունները ձեռք են բերվում խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում՝ առաջադրանքի իրականացման համար սահմանված ժամկետի համաձայն: Ծառայությունները մատուցվում են ամբողջական աշխատանքային գրաֆիկով, Երևանում: Անհրաժեշտության դեպքում, կիրականացվեն գործուղումներ դեպի ծրագրի տարածք:

ՋՈԾԲ Ծրագրի Սոցիալական մասնագետը/ԲՍԱԱ խմբի համակարգողը հաշվետու է ՋՈԾԲ Ծրագրի ղեկավարին/Ծրագրի ղեկավարի տեղակալին:

Աշխատանքները կիրականացվեն.	
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած: Կնքվելիք պայմանգրի պայմանները կիրառել կողմերի միջև 2026թ. հունվարի 5-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:	մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և դրանով նախատեսված վարկային միջոցներից Ծրագրի անձնակազմի վճարման գործընթացների մշակումը և մեկնարկը, սակայն ոչ ուշ քան 30.12.2026թ.
Ֆինանսավորման աղբյուր	
ՀՀ պետական բյուջե՝ մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և դրանով նախատեսված վարկային միջոցներից Ծրագրի անձնակազմի վճարման գործընթացների մշակումը և մեկնարկը	
Հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից աշխատանքների ընդունման ժամկետը	5 աշխատանքային օր
Վճարման ժամանակացույց	
2026թ. մատուցված ծառայությունների համար	
Ամսական հավասար համամասնությամբ	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am

_____ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Մարինե Վարդանյան
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 21-13
նույնականացման քարտի համարը՝
014968127, տրված 26.04.2023թ., 011-ի
կողմից կողմից հանրային ծառայությունների
համարանիշը 5212660198
Բանկը՝ ԱԿԲԱ բանկ
Հ/Հ 220304165818000
Հեռ. 094-58-88-30
Էլ. հասցե m_vardanyan@yahoo.com

---------- Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված N 2
« 18 » փետրվարի 2026թ. կնքված
***ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-Խ** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	85311210/16	խորհրդատվության ծառայություններ	1,966,000	2,949,000	3,932,000	4,915,000	5,848,000	6,881,000	7,864,000	8,847,000	9,830,000	10,813,000	11,796,000	11,796,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am

________________ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Մարինե Վարդանյան
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 21-13
նույնականացման քարտի համարը
014968127, տրված 26.04.2023թ., 011-ի
կողմից կողմից հանրային ծառայությունների
համարանիշը 5212660198
Բանկը՝ ԱԿԲԱ բանկ
Հ/Հ 220304165818000
Հեռ. 094-58-88-30
Էլ. հասցե m_vardanyan@yahoo.com

---------------------------- Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 3
«18» փետրվարի 2026 թ. կնքված
***ՁԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-Խ** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«18» փետրվարի 2026թ. կնքված
***ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-Խ** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն